

Երանի՜ այդ հայ ծաղիկ սրտերուն, որոնց մէջ այնքան սրբացած է ցաւը՝ երախտագիտութեան ու արիւթեան մէջ, այնքան նուիրական է պաշտօնը մեր Հայրենիքին ու անոր անկապտելի սրբութեանց հանդէպ:

«ԱԼԻՇԱՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ»

Մայիս 3ին, Սեւրի Մուրատեան վարժարանին մէջ Պ. Ա. Զօպանեան՝ Ալիշանի մասին կատարեց հմուտ բանախօսութիւն մը որուն հակիրճ գիծերը միայն կրնանք հոս ամփոփել:

Ան ներկայացուց Ալիշանը՝ Մխիթարեանց ու բովանդակ Հայութեան գրական ամենամեծ դէմքը: Վերջումեց Մխիթարեան ու Վենետեան միջավայրը ուր ապրեցաւ նա. իսկական վանական մը՝ որուն հոգւոյն մէջ շաղկապուած են անբակտէրիօքէն Աստուծոյ եւ Ազգին սէրը:

Հրաբուխ մըն է Ալիշան. արտադրած գործը հսկայական է, քսան հոգի անկարող պիտի ըլլային զայն իրականացնել. ամբողջ մատենադարան մըն է ան որ դեռ գրեթէ անծանօթ է նոյն իսկ մեր զարգացած գրագէտներուն, որովհետեւ իր գործերը գրաբար միայն արտադրած է:

Ան աւելի ծանօթ է Հայութեան իբրեւ բանաստեղծ. եւ ոչ միայն հայրենասէր քերթող մըն է, այլ եւ անոյեան Պայրըններու, Լամարթիններու: Ան կ'երգէ բնութիւնը, սէրը, հայրենիքը, իբրեւ մտածող եւ մեծ քնարերգակ: Ալիշան արհամարհանք մ'ունեցած է աշխարհաբարին հանդէպ (!). իր բարեկամներուն խնդրանքով միայն՝ աշուղական լեզուով գրած է իր բանաստեղծութիւններէն մէկ քանին: Գուցէ նա խախնամական իրականութիւն մըն է ասիկա, որովհետեւ եթէ մեր նախնիք կրօնական-պատմական գործեր արտադրեցին, Ալիշան այդ գրաբարով անմահացուց նաեւ հայ բանաստեղծութիւնը: Պաշտուած դաստիարակը հարցուելով ըսած է. «Տիտղոս կ'ուզէր՝ Քահանայ. շքանշաններս՝ Կապաս եւ Գօտիս»: Ազնիւ ու կրօնասէր հոգի, անմահացած Հայութեան սերունդներուն մօտ: —

Բանախօսութենէն վերջ վարժարանին սաները երգեցին Ալիշանի «Ո՛հ դու բարեկամ»ը, զոր Պ. Գ. Ալէմշահ յատկապէս եղանակած էր խորապէս անդրադարձնելով Ալիշանի բովանդակ քերական տիրութիւնը, եւ վարդանանց քայլերով անգամ մը եւս թնոգացուց փոփոխութեան գրահիշէր:

Յ. ՏՈՊԱՆԵԱՆ

ՕՐ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Այս տաղանդաւոր հայ օրիորդին արուեստին արժէքը գնահատելու համար հոս կը զետեղենք տեղւոյս «GAZZETTA DI VENEZIA» (21 Մայիս) թերթին դրուատիքը անոր մասին.

«Զ. նուագահանդէսը զոր տունին «Պենետեթ-թոյ Մարչելլոյ» Գաղաքական երաժշտանոցին աշակերտները, երէկ իրիկուն Բիզանի պալատին մեծ սրահը հրաւիրել էր անթիւ բազմութիւն մը:

«Երեկոյթն սկսաւ սոլաստուած նուագահանդէսովը Մ. Պոտուրեանի...»

«Նախորդ տարիներուն մէջ առիթներ ունեցանք խօսելու այս դեռատի դաշնակահար հայուհիին արուեստագէտի ազնուական խառնուածքին եւ իր զմայլելիօրէն երաժշտական բնութեան մասին, որ կը պահէ ամենէն աւելի յատկանշական զծերն իր ցեղին, որ այնքան դիւրապատրաստ է խորունկ յուզումներու, խորհրդաւոր յափշտակութեանց եւ ամենէն աւելի քնքշօրէն բանաստեղծական անձնատրութեանց:

«Այս տարի սքանչացանք դեռափթիթ հայուհիին վրայ իր արուեստագէտի կազմաւորութեան լի բովանդակ հասունութեանը, եւ ընթերցական գերադրականօրէն ազատ համարձակ, ճշգրիտ եւ զարգացած միջոցներուն լրիւ տիրապետման մէջ: Նէ նուագեց Սէն-Սանսի երկրորդ Concertoն (sol min. Op. 22) դաշնակի եւ երաժշտախումբի համար, իրաւքնէ՛ հրաշալի ձեւով մը...»

«Խորին զգացումով եւ քաղցր յուզումով ծաղկեցաւ «Andante sostenuto»ի զրոյցը, ու փոխուեցաւ ամենագոյն դարձաւորութեան՝ հայ-խոնարհ ամենագոյն դարձաւորութեան զգացումէն մը, մինչդեռ ուժեղ եւ թաւային զարնուածքը, դարձուածքը տարաւ դէպ ի ծայրագոյն փափկութեան մը արդիւնքները, եւ դէպ ի լեցուն եւ լուսեղէն հնչականութիւն մը, որոնք սքանչելապէս ձուլուեցան եւ հաւասարակշռուեցան երաժշտախումբին մեկնութեան ու խոյանքներուն մէջ: Վսեմ եւ ամենափայլուն զաւեշտային երկրորդ tempo-ին մէջ... Մ. Պոտուրեան, ինքնաբուխ եւ ամենաթեթեւ խոյանքով մը Prestoն մէջ, իր մոգիչ արուեստով այնպիսի փայլատալուսներ ունեցաւ որ ամբողջ ունկնդիրները խանկաւ առեցին իր արուեստը: Մեզի կը մնայ խնդակցիլ եւ մաղթել ընդ փոյթ տաղանդաւոր օրիորդին փառքերուն իր անկախ արուեստին պատկը երջանիկ ապագայի մը գրաւականով:

ԽՄԲ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՎԵՆԵՏԿՈՅ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

Հեղ. ԷՄԻԼԻՈՅ ՍԱԿԱՐԻ

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՄՂՈՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԵՐՔԵՒ

ԹԱՐԳՄԱՆԵՅ

Հ. ՅԱԿՈԲՈՍ ԲՈՍՈՒՅԵԼԲԵԱՆ

(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 2)

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԷՄԻԼ. ՕԹԹՈՅԻ ՈՃՈՎ.

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՅ

Հ. ԱԼԵՔՍԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բ. ՏՊ. ԲԱՐԵՓՈԹԻԱՆ

(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 2.50)

Հ. ՄԱՆՈՒԷԼ ԹԱՇԷԱՆ

ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԶԻՆ ԳԱՍԸՆԹԱՅՔ

F S U R T

ԵՒՐՈՊԱ ԵՒ ԱՍԻԱ

(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 2.20)

Հ. ԵՍԱՅԻ ՏԱՅԵՅԻ

ՅՈՒՇԱԳԻՐ

ԿԵՆՍՅ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ԿՈՅՍԵՐՍԿԱՆ ԼՈՒՍՆԿԱՐԻԶ

ԳԻՐԳ. ԱՊՏՈՒԼԼԱՀԻ

ԶԱՐԳԱՐՈՒՄԸ 7 ՆԿԱՐՆԵՐՈՎ.

(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 1.80)

ՀԱՐԵՐՈՐ

Խմբագրութիւնս կը խնդրէ այն բաժանորդներէն, որոնք ցարկ յետ-նեալ հաշիւներ ունին, փութացնելու անոնց կարգադրութիւնը: